

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՏԵՓԱՆԱՎԱՆՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԼՈՌԻ, ՄԱՅԻՍ 2013

Նախաբան

Սույն համայնքային զարգացման նախագիծը կազմվել է տեղի շահագրգիռ կազմակերպությունների աշխատանքային խմբերի կողմից՝ լիցենզավորված փորձագետների գլխավորությամբ՝ մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման մեթոդաբանության կիրառմամբ, նպատակ ունենալով վերլուծել Ստեփանավան համայնքի տեղային տնտեսությունը, բացահայտել տնտեսական զարգացման ռազմավարական ճյուղերը և նախատեսել միջամտություններ, որոնք կհանգեցնեն ներառական տնտեսական աճի: Ներգրավելով տեղի բնակչությանը տվյալների հավաքագրման և վերլուծման, ինչպես նաև նախաձեռնությունների ներկայացման և հաստատման գործում՝ նախագիծը հետևողական է տեղային սեփականության կառուցմանը, ինչը խթան կհանդիսանա համայնքի բնակչության կողմից իրականացվող գործողություններին՝ նախաձեռնություններն իրագործված տեսնելու համար:

Համայնքների տնտեսությունների վերլուծությամբ և մրցակցային առավելությունների որոշմամբ բնական ռեսուրսների և տուրիզմի ոլորտում՝ աշխատանքային խումբը բացահայտել է այն ռազմավարական ոլորտները, որոնք Հայաստանում այլ շրջանների համեմատ առավել արժեքավոր են: Այն ոլորտները, որոնք ավելի խորն են ուսումնասիրվել, դա տուրիզմն է և խոշոր եղջերավորների անասնապահությունը: Քանի որ տուրիզմն առանձնացվեց որպես բացառիկ ներուժ ունեցող ոլորտ, որի արժեքը կարելի է բարձրացնել բազմակի արժեքային շղթաների գործողությունների զարգացման միջոցով, խումբը եկավ այն եզրահանգմանը, որ կարևոր էր զարգացնել միջամտության ձևեր, որոնք իրենց ազդեցությունը կունենան տնտեսության բազմաթիվ հեռանկարային ոլորտների վրա և հանդես եկան հետևյալ չորս միջամտությունների առաջարկով՝ հստակ քայլեր առաջարկելով տարբեր շահագրգիռ կողմերի համար.

- (1) Տուրիզմի զարգացման ռազմավարության իրագործումը նպատակ ունի նպաստել ոլորտի հետագա զարգացմանը;
- (2) Համայնքի մասին տեղեկատվության և հաղորդակցման մշակումը նպատակ ունի բարձրացնել տուրիզմի խթանումը Ստեփանավանում;
- (3) Ֆինանսական և տեխնիկական աջակցություն ձեռներեցներին, որի նպատակն է բարձրացնել հյուրանոցային տների թիվը;
- (4) Քաղաքային բարեփոխումներ, որոնց նպատակն է տուրիզմի խթանումը:

Սույն նախագիծը մշակվել է JOIN ծրագրի շրջանակներում, որը ՔԷՅՐԻ կողմից իրականացվում է Հարավային Կովկասում՝ Վրաստանում Քաղաքացիական Զարգացման Գործակալության և Հայաստանում Ագրոբիզնեսի և Գյուղական զարգացման կենտրոնի հետ համատեղ: Այն ֆինանսավորվում է Ավստրիական Զարգացման Համագործակցության կողմից (ԱԶՀ) և նպաստում է ԱԶՀ-ի կողմից 2012-2020թթ. ռազմավարությանը Վրաստանի և Հայաստանի համար:

JOIN ծրագիրը նպաստում է աղքատության հաղթահարմանը Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում իշխանություն, քաղաքացիական հասարակություն և անհատ սեկտորի միջև համագործակցության բարելավմամբ՝ ստեղծելով հասանելի միջավայր հոգուտ

աղքատության սոցիալ-տնտեսական զարգացման՝ մասնակցային պլանավորման, բարելավված համագործակցության և բոլոր երեք ոլորտների միջև շուկային առնչվող տեղեկատվության փոխանակման միջոցով: Ծրագրի թիրախներն են՝ վրացական Գարդաբանի, Մարնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Նինոցմինդա և Ախալքալակ համայնքները, և հայկական Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերը:

Համագործակից կառույցներ

CARE Ինթերնեշնլի Կովկասյան գրասենյակը



Բիզնես Պարետա ՍՊԸ



Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն



Ստեփանավան համայնքում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2013 թ-ի մայիս ամսին Բիզնես Պարետա կազմակերպության կողմից՝ CARE International կազմակերպության նախաձեռնությամբ, որի ընթացքում բացահայտվեցին համայնքի տեղական տնտեսության հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որի հիման վրա վեր հանվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Բովանդակություն

Նախաբան.....	2
Համագործակից կառույցներ	3
Մեթոդոլոգիա.....	5
Ստեփանավան.....	6
Համայնքի ժողովրդագրական և աշխարհագրական ցուցանիշներ	6
Ստեփանավանի տնտեսությունը.....	7
Ստեփանավանի տնտեսության մրցակցային առավելությունները	8
Տնտեսության ճյուղերի վերլուծություն	9
Զբոսաշրջությունը Ստեփանավանում.....	10
Զբոսաշրջիկության արժեզրթայի գնահատում.....	12
Նախաձեռնություններ տուրիզմի զարգացման ոլորտում.....	14
Իրականացվելիք գործողությունները՝ ըստ խնդիրների և պատասխանատուների.....	14
Կանանց ներգրավվածությունը զբոսաշրջության ոլորտում.....	16
Անասնապահությունը Ստեփանավանում.....	17
Շահույթի հաշվարկ.....	19
Անասնապահության արդյունավետության բարձրացման հնարավորություններ.....	19
Լիակթում	19
Սեփական մինի- գյուղտեխնիկայի և կթի սարքավորման կիրառում	21
Կաթնատու տոհմային անասունների բուծում	22
Անասնապահության օժանդակ հողագործություն	22
Անասնապահության համեմատությունը ՀՀ առաջատար տարածաշրջանների հետ	24
Կանանց ներգրավվածությունը անասնապահության մեջ.....	24
Նախաձեռնություններ անասնապահության ոլորտում	25
Խոտի պահեստավորում	25
Լրացուցիչ կերերի մշակում	26
Արոտավայրերի օգտագործում, այդ թվում հեռագնա	26
Կաթի արտադրության արդյունավետության բարձրացում.....	26
Անասնապահության ոլորտում աջակից կառույցներին ուղղված առաջարկություններ:	27
Տնտեսության այլ ոլորտներ և կանանց ներգրավվածությունը.....	28

Մեթոդոլոգիա

Սույն համայնքային զարգացման նախագծում կիրառվել է մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման մեթոդաբանությունը, որը ներկայացվել է Հայաստանում Գերմանիայի Հասարակության Միջազգային համագործակցության (GIZ, նախկինում՝ GTZ) և իրագործվել է 21 համայնքում: Սույն մեթոդաբանությունը կազմվել է Բիզնես Պարետա խորհրդատվական ընկերության մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման փորձագետներ Արտակ Դադոյանի և Կարեն x կողմից: Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման նպատակն է գնահատել համայնքային տնտեսությունը՝ բացահայտելու մրցակցային առավելությունները, առաջարկել նախաձեռնություններ, որոնք կբարելավեն մրցակցությունը, եկամտի աղբյուր կլինեն և կստեղծեն աշխատատեղեր: Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման սկզբունքներն են՝

- Մասնակցային մեթոդ;
- Կենտրոնանալը ուժեղ կողմերի վրա, ավելին քան թույլ կողմերի վրա;
- Արագ և տեսանելի արդյունք;
- Հաղորդակցում և երկխոսություն համայնքային գործիչների միջև;
- Ներքնից վերև փոփոխություն;
- Զարգացում՝ հիմնված տեղի ռեսուրսների վրա:

Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման ընթացակարգը բաղկացած է հետևյալ փուլերից.

- Տեղային թիմերի հիմնում՝ բաղկացած հիմնական համայնքային գործիչներից
- Տնտեսության առկա վիճակի և մրցակցային առավելությունների գնահատում տեղային թիմի կողմից (փորձագետների հետ համատեղ), տեղային զարգացման նախաձեռնությունների բացահայտում
- Մեկնարկային հանդիպումներ՝ համայնքի շահագրգիռ կողմերին տեղեկացնելու իրենց համայնքում տեղային զարգացման նախաձեռնություններ ծրագրի մեկնարկի մասին, որտեղ համայնքային գործիչները առաջին անգամ են ներառվելու ծրագրում
- Հարցազրույցներ և փոքրածավալ աշխատանքային հանդիպումներ. այս փուլում ավելի մեծ թվով համայնքային գործիչներ են ներառված
- Արդյունքների մշակում. այս փուլում տեղային թիմը մշակում և ամփոփում է հարցազրույցների և աշխատանքային հանդիպումների արդյունքները
- Արդյունքների ներկայացում, որտեղ համայնքային գործիչները տեղեկացվում են ծրագրի արդյունքների և առաջարկված տեղային զարգացման նախաձեռնությունների մասին
- Շահագրգիռ կողմերի հետ համատեղ գործողությունների պլանի մշակում առաջարկվող նախաձեռնությունների համար

Սույն մեթոդաբանությունը հիմնված է 12 թվով մարդկանց(8 տղամարդ և 4 կին) հիմնական խմբի աշխատանքների վրա՝ ներառելով 5 թրեյնինգի և վերլուծության օր և 11 վիճակագրական տվյալների հավաքագրման իր, որը բաղկացած է 91 հարցազրույցներ տեղի բնակչության շրջանում՝ 10 թվով տարբեր գործունեության ոլորտներից:

Ստեփանավան

Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին է գտնվում Ստեփանավան քաղաքը, որն սկսած 1967 թ-ից համարվում է հանրապետական ենթակայության առողջարանային քաղաք՝ ի շնորհիվ քաղաքի բնակլիմայական բարենպաստ պայմանների՝ մեղմ, չափավոր կլիմա, զով օդ, սառնորակ ու հանքային աղբյուրներ, կանաչապատ սարավանջեր ու սոճու անտառներ: Սովետական միության տարիներին ԱՊՀ գրեթե բոլոր երկրներից մեծաքանակ զբոսարջիկներ են այցելել Ստեփանավան՝ առողջարանային և էկոտուրիզմի նպատակով: Ստեփանավանը սպասարկել է օրական մինչև 1000 զբոսաշրջիկ:

1988թ.-ի երկրաշարժը մեծ վնասներ պատճառեց Ստեփանավանին: Երկաշարժից և նրան հաջորդող ՀՀ անկախությունից հետո պատկերը փոխվել է: Գնալով պակասել է զբոսաշրջությունը, ինչի հետևանքով երբեմնի հզոր պոտենցիալ ունեցող առողջարանային քաղաքի տնտեսության հիմնաքարն է դարձել խոշոր եղջերավոր անասնապահությունը: Այժմ տնային տնտեսությունների գրեթե կեսը զբաղվում են անասնապահությամբ: Բավականին մեծ է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:

Տուրիստական գրավչության վերականգնումը համարվում է Ստեփանավանի ՏԻՄ-ի ռազմավարական թիրախներից մեկը, որի հետ կապված մեծածավալ աշխատանքներ են կատարվում համայնքում:

Համայնքի ժողովրդագրական և աշխարհագրական ցուցանիշներ

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Ստեփանավանի բնակչության թիվը 17681 մարդ է, որոնց մեջ կանայք 54 % են: Տնային տնտեսությունների քանակը 5217 է: Համայնքի բնակչությունը հիմնականում միատարր է, սակայն կան նաև այլազգիներ՝ հույներ, եզդիներ, ռուսներ և այլն (մոտ 400 մարդ):

Ստեփանավան համայնքը գտնվում է ՀՀ Լոռու մարզում՝ մայրաքաղաք Երևանից 157 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից՝ 36 կմ հեռավորության վրա: Համայնքի միջով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության Մ3 ավտոմոբիլային մայրուղին:

Շովի մակերևույթից գտնվում է 1450 մ միջին բարձրության վրա: Համայնքի կլիման չափավոր խոնավ է, ձմեռը մեղմ է. չափավոր ցուրտ, ամառը՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ: Ամռանը միջին ջերմաստիճանը կազմում է 18 °C, իսկ առավելագույնը՝ 35°C: Ամռան ամսական տեղումների միջին քանակը հասնում է 55 մմ-ի, առավելագույնը՝ 135 մմ-ի:

Տարածաշրջանը հարուստ է հանքային ջրերով, տորֆի և այլ բուժիչ ցեխերով, կլիմայաբուժության համար բարենպաստ պայմաններով և տեղամասերով, ինչպես նաև՝ պատմամշակութային, հնագիտական հուշարձաններով:

Ստեփանավանի տնտեսությունը

Ստեփանավանի տնտեսությունը բազմաճյուղ է: Տնտեսության գերակա ճյուղերն են տուրիզմը և կաթնատու անասնապահությունը:

Ստեփանավանում գործում է մեկ արդյունաբերական գործարան՝ «Սագամար» ՓԲԸ -ն, որն զբաղվում է հանքարդյունաբերությամբ: Այն ժամանակակից հարստացուցիչ գործարանն է՝ հագեցած համաշխարհային առաջատար արտադրողներից ձեռք բերված նորագույն սարքավորումներով, ամբողջ Անդրկովկասում իր տեսակի մեջ միակ լաբորատորիայով, ինչպես նաև կանադական և գերմանական արտադրության հատուկ նշանակության մաքրման կայաններով (պաշտոնական կայք՝ <http://www.globalmetals.am/>): Կազմակերպությունը արտադրում է պղնձի, ցինկի, կապարի և ոսկու խտանյութեր տարեկան 500 - 600 հզ տոննա արտադրական ծավալով: 2013թ-ին նախատեսվում է արտադրանքի ծավալը հասցնել 800 հզ տոննայի: Ստեփանավանի համայնքից գործարանում են աշխատում մոտ 350 աշխատողներ:

Համայնքում գործում են 12 արտադրական փոքր ձեռնարկություններ՝ լիմոնադի արտադրություն, քարի և փայտի վերամշակում, կահույքի, եվրո-դռների ու լուսամուտների, հացամթերքների, մսամթերքի և կաթնամթերքի արտադրություններ:

Քաղաքում գործում է «Բախշի Պլազմա» ձեռնարկությունը, որը վերաձևավորվել է նախկին տրանսֆորմատորային, պլազմատրոնային, կապի սարքավորումներ արտադրող համամիութենական համարվող գործարանի բազայի վրա և արտադրում է փոքր քանակությամբ տրանսֆորմատորներ:

Գործում են կենցաղային սպասարկման 27 ձեռնարկություններ, 221 առևտրի և հասարակական սննդի օբյեկտներ, 5 հյուրանոցներ (*գրոսաշրջությունը և հարակից սպասարկման ոլորտները, որպես Ստեփանավանի համայնքի զարգացման առաջատար ճյուղ, վերլուծված են «Զրոսաշրջություն» բաժնում*):

Տնտեսության առանցքային ճյուղերից է կաթնատու անասնապահությունը և օժանդակող հողագործությունը: Գյուղատնտեսության հիմնական ցուցանիշները հակիրճ ներկայացված են ստորև:

Ցուցանիշներ	
Վարելահողեր	634 հա
Խոտհարք	1118 հա
Արոտավայր	1500 հա
Խոշոր եղջերավոր	3340 գլուխ
Մանր եղջերավոր	701 գլուխ
Մեղվաբնակարաններ	124

(Անասնապահության մանրամասն վերլուծությունը տե՛ս «Անասնապահություն» բաժնում):

Ստեփանավանում գործում են Արդշինինվեստբանկ, ՎՏԲ բանկ, ԱԳԲԱ Ագրիկոլ բանկ, Հայգյուղփոխբանկ, Ֆինկա, ՍԵՖ ինթերնեշնլ, Արեգակ, ԷԿԼՕՖ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները:

Ակտիվ է նաև հասարակական կյանքը: Համայնքում գործում են «Վերածնունդ» ԲՀ, «Օրհուս» բնապահպանական ՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Հույս, հավատ, սեր» ՀԿ, «Տեղական կենտրոն» ՀԿ, «Զարգացող համայնքներ» ՀԿ և «Լոռի» փրկարարական ջոկատ ՀԿ կազմակերպությունները:

Ստեփանավանի տնտեսության մրցակցային առավելությունները

Տեղական թիմը և փորձագետները համատեղ վեր հանեցին համայնքի մրցակցային առավելությունները: Հետագա նախաձեռնությունները և տնտեսության զարգացման հեռանկարը քննարկված և վերլուծված են այս մրցակցային առավելությունների հետ ընդհանուր համատեքստում: Այդ մրցակցային առավելություններն են.

- ⇒ Զբոսաշրջության համար բարենպաստ բնակլիմայական պայմաններ՝ մեղմ ու չափավոր խոնավ կլիմա, զով օդ և սառնորակ ջուր:
- ⇒ Եղնիների ու սոճիների անտառ (6665 հա), որը բացառիկ բուժիչ առանձնահատկություններ ունի փոշոտման սեզոնին:
- ⇒ Բուժիչ հանքային ջրեր:
- ⇒ Բուժիչ տորֆային ցեխեր:
- ⇒ Պատմամշակութային հնավայրեր և տեսարժան վայրեր:
- ⇒ Քաղաքի՝ որպես առողջարան համբավ:
- ⇒ Մ3 մայրուղին, որն անցնում է քաղաքով:
- ⇒ Խոշոր եղջերավոր անասնապահության զարգացման բարենպաստ պայմաններ (խոտհարքեր, արոտավայրեր, բարենպաստ կլիմա):
- ⇒ Անասնապահության աջակցման ժամանակակից կենտրոն/լաբորատորիա:



Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտե՞ղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը, և որտե՞ղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա:

Ռազմավարական ճյուղեր

⇒ **Առողջարանային, էկոլոգիական տուրիզմ և հարակից սպասարկում**

Ստեփանավան համայնքը առողջարարական բնակլիմայական պայմաններով յուրահատուկ է, և դեռևս Ստեփան Շահումյանի բնորոշմամբ համարվել է «երկրորդ Շվեյցարիա»:

⇒ **Կաթնատու անասնապահություն և օժանդակ հողագործություն**

Այս ոլորտը ավանդապես զարգացած է եղել Ստեփանավանի շրջանում և այժմ տնային տնտեսությունների 20 %ը զբաղվում են անասնապահությամբ:

Զբոսաշրջությունը Ստեփանավանում

Ստեփանավանը առողջարանային մեծ պոտենցիալ ունեցող քաղաք է: Քաղաքի մեղմ, չափավոր կլիման, գով օդը, սառնորակ ու հանքային աղբյուրները, Ձորագետի կիրճը, կանաչապատ սարալանջերն ու սոճու անտառները հրաշալի պայմաններ են ընձեռում էկոտուրիզմի զարգացման համար: Դրան նպաստում է նաև զբոսաշրջիկների կողմից բարձր գնահատվող բնական, թարմ ու առողջ բնամթերքի առկայությունը, ինչպես նաև մի շարք պատմամշակութային կառույցների ու տեսարժան վայրերի առկայությունը, ինչպիսիք են՝ Լոռի միջնադարյան բերդաքաղաքը, դամբարանադաշտը, մի շարք հին ու նոր եկեղեցիներ, մատուռներ, ինչպես նաև Ստեփանավանից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող <<Բուսաբանական այգին>>, որը հայտնի է <<Դենդրոպարկ>> անունով:

Քաղաքն ունի

- 1 զբոսայգի
- 2 խաղահրապարակ
- 6 հանգստի գոտի
- 6 մերձակա անտառային գոտի

Քաղաքում գործող հանգստի գոտիները տեղակայված են անտառածածկ ռեկրեացիոն գոտում: Մեկ հոգու հանգստի գումարը կազմում է 6 000 –ից մինչև 30 000 դրամ, որը ներառում է 3 անգամյա սնունդ:

Հանգստի գոտիները կարող են միասին սպասարկել օրական 400 մարդու, համագործակցում են հիմնականում երևանյան տուրիստական գործակալությունների հետ: Առկա է ներքին համագործակցություն, երբ ազատ սենյակներ չունենալու դեպքում հաճախորդին ուղարկում են քաղաքում գործող այլ հանգստի գոտի:

Կազմակերպում են արշավներ և տուրեր դեպի տեսարժան վայրեր, հնավայրեր՝

- Աշոտ Երկաթի բերդ,
- Հնեվանք,
- Դենդրոպարկ,
- Այլ տեսարժան վայրեր:

Հանգստի գոտիները հիմնականում գովազդված չեն: Նրանց գովազդի աղբյուրը մշտական հաճախորդներն են:

Քաղաքում գործում են 4 հյուրանոցներ, 5 հյուրատներ: Մոտ 30 բնակարաններ վարձով են տրվում: Ընդհանուր առմամբ Ստեփանավանը կարող է գիշերակացով ապահովել օրական մինչև 1000 մարդու:

Ստեփանավանը մշտական կապի մեջ է ՀՀ խոշոր քաղաքների հետ՝

- Ստեփանավան-Երևան –յուրաքանչյուր օր 5-6 անգամ
- Ստեփանավան-Վանաձոր- յուրաքանչյուր օր 6-7 անգամ

- Ստեփանավան-Գյումրի- օրը մեկ անգամ
- Ստեփանավան-Ավալվերդի-օրը 2 անգամ

Ստեփանավանը մշտական տրանսպորտային կապի մեջ է նաև Վրաստանի հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիի հետ: Յուրաքանչյուր օր, օրը 2 անգամ, Ստեփանավանից երթուղային տաքսի է մեկնում հարևան պետության մայրաքաղաք: Համայնքում գործում են 6 տաքսի – սերվիսներ:


Համայնքում կա 7 հասարակական սննդի օբյեկտ, 2 բացօթյա սրճարան: Գործում է մեկ մանկական սրճարան, որտեղ առաջիկայում կտեղադրվի նաև «ավտոդրոմ»: Համայնքում ժամանցի երկու խաղային վայրեր կան փոքր թենիսի և բիլիարդի:

Տուրիստների հոսքը դեպի քաղաք սկսվում է մայիս –հունիս ամիսներին, երբ սոճիների փոշոտման սեզոնն է, և շարունակում մինչև աշնան սկիզբ: Հիմնական հանգստացողները ՀՀ-ից են (95%): Դիտվում է տուրիստների հոսքի աճ:

Տուրիզմի զարգացումը գտնվում է Ստեփանավանի ՏԻՄ-ի ուշադրության կենտրոնում: Կատարվում են քաղաքի բարեկարգման և կանաչապատման ծավալուն աշխատանքներ:



Զբոսաշրջիկության արժեշղթայի գնահատում



	Հնարավորություններ	Բարելավման ուղղություններ
Տեղափոխում	5 տաքսի սերվիս: Կապ այլ քաղաքների և Վրաստանի հետ:	Բավականին բարձր են դեպի Հայաստան ինքնաթիռի տոմսերի արժեքները, ինչը խանգարում է տուրիստների հոսքին:
Գիշերակաց	6 հանգստյան գոտի, 4 հյուրանոց, 3 հյուրատուն և 30 վարձով տրվող բնակարան, որոնք կարող են գիշերակացով ապահովել միաժամանակ 1000 մարդու:	Հարմարավետության պակաս, սենյակները հիմնականում գույքային թարմացման կարիք ունեն:
Մնունդ	7 սննդի օբյեկտ են գործում: Բոլոր հյուրանոցները և հանգստյան գոտիները ունեն իրենց ռեստորանները:	Հասարակական սննդի օբյեկտների շատ փոքր հատվածը ունի մենյու: Ավանդական ճաշատեսակներ գրեթե չկան:
Գնումներ	Գործում են երկու մանկական մասնագիտացված խանութ:	Բրենդային խանութներ և հուշանվերների վաճառք չկա:
Ժամանց	Համայնքում գործում է երկու լողավազան, կառուցվում է ֆիտնես ակումբ, կան բիլիարդի և սեղանի թենիսի խաղասրահներ:	Համայնքին անհրաժեշտ են երեկոյան ժամանցային վայրեր, մարզադահլիճներ և այլն:
Անվտանգություն և առողջապահություն	Հասանելի է առաջին բուժօգնությունը	
Արշավներ	Հանգստի գոտիները կազմակերպում են արշավներ իրենց տուրիստների համար:	Չկան տուր-արտադրանքի գովազդային և տեղեկատվական առաջնորդական գործիքներ: Ճանապարհները հիմնականում գտնվում են վատ վիճակում:

Նախաձեռնություններ տուրիզմի զարգացման ոլորտում

Նախաձեռնություն	Զբոսաշրջության զարգացում Ստեփանավանում
Նախաձեռնության համակարգող	Ստեփանավանի ՏԻՄ
Նախաձեռնության աջակից կառույցներ	Care International, ՀՀ ՓՄՁՁԱԿ
Նպատակ	Քաղաքի կայացումը որպես առողջարարական և էկո տուրիզմի կենտրոն
Խնդիրներ	
	Տուրիզմի ոլորտի զարգացման ուղեկցում
	Գովազդային – տեղեկատվական գործունեություն
	Ծառայության ոլորտում սպասարկման որակի բարձրացում
	Հյուրատների քանակի աճ, ցանցի ստեղծում
	Քաղաքի բարեկարգում և կանաչապատում

Իրականացվելիք գործողությունները՝ ըստ խնդիրների և պատասխանատուների

Խնդիր I. Տուրիզմի ոլորտի զարգացման ուղեկցում

Գործողություն	Պատասխանատու
Ստեփանավանի տուրիզմի զարգացման ռազմավարության հետևողական իրականացում	ՏԻՄ
Տեղական –տուր օպերատորի հիմնում	ՏԻՄ / Աջակից կառույցներ / Գործարարներ
Գիդերի, թարգմանիչների, հրահանգիչների վերապատրաստում	Տուր օպերատոր, Աջակից կառույցներ
Տուրերի մշակում, գովազդում	Տուր օպերատոր, Հանգստի գոտիներ
Կապ արտաքին տուր օպերատորների հետ	Տուր օպերատոր

Խնդիր II. Գովազդային – տեղեկատվական գործունեություն

Գործողություն	Պատասխանատու
Գովազդային - տեղեկատվական բուկլետների տպագրություն	Տուր օպերատոր, Աջակից կառույցներ
Տուրիստական միջոցառումների, ցուցահանդեսների մասնակցություն	ՏԻՄ, Աջակից կառույցներ
Ինտերնետ կայքի պատրաստում, եղած կայքերում Ստեփանավանի տուրիստական գրավչության առանձին ներկայացում	Տուր օպերատոր, ՏԻՄ, Աջակից կառույցներ

Խնդիր III . Ծառայության ոլորտում սպասարկման որակի բարձրացում

Գործողություն	Պատասխանատու
Ավանդական ճաշատեսակների մատուցում	Գործարարներ
Երկու լեզվով մենյուի օգտագործում	Գործարարներ
Էկո-տուրիզմի տարբեր բնագավառներում անհրաժեշտ նյութական ռեսուրսային միջոցների բարելավում, թարմացում	Գործարարներ

Խնդիր IV. Հյուրատների քանակի աճ, ցանցի ստեղծում

Գործողություն	Պատասխանատու
Հյուրատների զարգացման միասնական ռազմավարության և որակի ստանդարտների կազմում	Աջակից կառույցներ
Բիզնես պլանավորման դասընթաց՝ հյուրատան ոլորտում ներդրում կատարող գործարարների հետ	Աջակից կառույցներ
Ֆինանսական աջակցություն	ՓՄՁ ԶԱԿ

Խնդիր V. Քաղաքի բարեկարգում և կանաչապատում

Քաղաքում ցուցանակների, ուղեցույցների և քարտեզների տեղադրում	ՏԻՄ, Աջակից կառույցներ
Քաղաքի կանաչապատում	ՏԻՄ, Աջակից կառույցներ
Քաղաքի խորհրդանիշի ստեղծում	ՏԻՄ

Կանանց ներգրավվածությունը զբոսաշրջության ոլորտում

Տեղափոխում

Գործող 5 տաքսի սերվիսներից 2 – ը պատկանում են կանաց: Բոլոր 5 կազմակերպություններում էլ դիսպետչերները կանայք են:

Գիշերակաց և հանգստի գոտիներ

Հանգստի գոտիներից մեկը պատկանում է կնոջ: Այս ոլորտում կանայք ներգրավված են խոհանոցային, հավաքարարչական, մատուցման աշխատանքներում: Ընդհանուր առմամբ հանգստի գոտիներում և հյուրանոցներում աշխատում են մոտ 30 կին:

Հասարակական սնունդ

Գործող հասարակական սննդի կետերից մեկը պատկանում է կնոջ: Այստեղ ևս կանայք աշխատում են խոհանոցային, հավաքարարչական և մատուցման ոլորտներում: Այս ոլորտում աշխատում է մոտ 40 կին:

Ժամանց

Այս ոլորտը թերզարգացած է համայնքում: Ներգրավված են 4-5 կին՝ որպես ադմինիստրատոր:

Գնումներ – Առևտուր

Կանանց մեծ մասը կենտրոնացած է հենց այս ոլորտում: 40 առևտրի օբյեկտներ կառավարում են կանայք: Կանայք ներգրավված են նաև որպես վաճառողուհիներ: Ընդհանուր առմամբ՝ այս ոլորտում աշխատում է մոտ 100 կին:

Այցելություններ

Քաղաքում կան 5 գիդ-կին, ովքեր անհրաժեշտության դեպքում ուղեկցում են զբոսաշրջիկներին դեպի տեսարժան վայրեր:

Անասնապահությունը Ստեփանավանում

Այս շրջանում անասնապահությունը (հատկապես՝ խոշոր եղջերավոր) ավանդապես զարգացած է եղել: Երկրաշարժից և ՀՀ անկայությունից հետո, երբ Ստեփանավանում կտրուկ նվազեց զբոսաշրջիկների հոսքը և փակվեցին համայնքում գործող գործարանները, որտեղ զբաղված էր աշխատունակ բնակչության հիմնական մասը, անասնապահությունը դարձավ բնակչության եկամտի հիմնական աղբյուրը:

Այժմ անասնապահությամբ են զբաղվում համայնքի տնային տնտեսությունների մոտ 20%-ը: Զարգացած է հիմնականում խոշոր եղջերավոր անասնապահությունը, ինչը պայմանավորված է նպաստավոր պայմաններով (արոտավայր, խոտհարք և այլն) ինչպես նաև կաթնամթերքի արտադրության ձեռնարկությունների առկայությամբ (Տաշիր համայնք, որի հեռավորությունը Ստեփանավանից 12 կմ է), որոնք մթերում են կաթը:

Համայնքում խոշոր եղջերավոր անասունների թիվը 3340 գլուխ է, որից կովերը 2850 -ն են՝

- ⇒ 1 տնտեսությունն ունի մոտ 200 գլուխ անասուն,
- ⇒ 2 տնտեսությունն ունեն մոտ 100 գլուխ անասուն,
- ⇒ 5 տնտեսությունն ունեն 30 - 50 գլուխ անասուն,
- ⇒ 25 տնտեսությունն ունեն 10 - 30 գլուխ անասուն,
- ⇒ մոտ 400 տնտեսությունն ունեն 4-5 անասուն:

Մեկ կովի միջին կաթնատվությունը տարեկան կազմում է 1500 -1600 լ (*հիմնականում կովերը չեն լիակթվում*): Կաթի մեծ մասը հանձնում են Ստեփանավանում գործող «Ալպիան» կաթի փոշու արտադրության գործարանին, Տաշիրի կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերություններին և «Աշտարակ կաթ» ձեռնարկության տեղական մատակարարներին 130 -140 դրամով: Ստացված կաթի մոտ 10 %-ը օգտագործվում է սեփական կարիքների բավարարման և փոքր թվով հաճախորդների վաճառման համար՝ տնական պայմաններում կաթնամթերքի արտադրության մեջ (պանիր, յուղ, մածուկ):

Ստորև ներկայացված է 10 կովի հաշվով մեկ տարվա ընթացքում կատարվող ծախսերը և հիմնական գործընթացը: Գործընթացը սկսել ենք հաշվարկել մայիս ամսվանից:

Լիակթում - տարեկան կտրվածքով ստացվող կաթի մաքսիմալ քանակը, որին հնարավոր է հասնել ճիշտ կերակրման և պահքի միջոցով: Կովկասյան գորշ տեսակի համար լիակթման ցուցանիշը 3000 լիտր/տարի է:



Զմռան կերակրման համար հուլիս ամսին սկսվում են խոտի հավաքման աշխատանքները: 10 կովի կերակրելու համար անհրաժեշտ անասնախոտի համար քաղվում է մոտ 12,5 հա մակերես, որի ծախսերն են

- Վարձ- 87 500 դրամ (7000 դրամ/ հա)
- Խոտքաղ-187500 դրամ (15000 դրամ/ հա)
- Փոցիս-87 500 դրամ (7000 դրամ/ հա)
- Հակի կապում-125 000 դրամ (10000 դրամ/ հա),
- Բեռնատար- 100 000 դրամ,
- Բանվոր-62 500 դրամ:

Մայիս ամսից սկսած մինչև հոկտեմբեր ամսվա վերջ կովերի արոտ ուղարկման համար վճարում են հովիվին մեկ կովի համար ամսական 3500 դրամ: $3500 \times 10 \times 6 = 210\ 000$ դրամ

Նոյեմբեր – ապրիլ ամիսներին կովերը անասնագոմում են: Օգտագործվում է մոտ 250 000 դրամի լրացուցիչ կեր (հացահատիկ, կարտոֆիլ և այլն), որոնք հիմնականում ցանվում են ֆերմերների կողմից: Մեկ կովի հաշվով անասնաբուժական ծախսերը կազմում են 10 000 դրամ (ներառած արհեստական սերմնավորումը)`

$10\ 000 \times 10 = 100\ 000$ դրամ:

Տարվա ընթացքում ծախսվում է նաև մոտ 75 000 դրամ լրացուցիչ գումար, ինչպես նաև կովի կթման գումարը, որը մեկ ամսվա համար 3500 դրամ է:

9 ամիս x 3500 դրամ x 10 կով = 315 000 դրամ:

Շահույթի հաշվարկ

		Խոտի հավաքման և այլ գործողությունների պատվիրում	Խոտի հավաքման և այլ գործողությունների մեջ ֆերմերի ուղղակի ներգրավվում
1	Ստացվող կաթ	1 600 լիտր x 10 = 16 000 լիտր	1 600 լիտր x 10 = 16 000 լիտր
1.1	Կաթի վաճառքից եկամուտ	16 000 x 130 = 2 080 000 դրամ	16 000 x 130 = 2 080 000 դրամ
2	Հորթ	8 հատ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը եկամուտ (1 + 2)	= 2 400 000 դրամ	= 2 400 000 դրամ
4	Ծախսեր	= 1 210 000 դրամ	= 726 000 դրամ ¹
5	Շահույթ	= 1 190 000 դրամ	= 1 674 000 դրամ

Անասնապահության արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Լիակթում

Գերակշռում է կովկասյան գորշ տեսակը: Այս տեսակի լիակթման ցուցանիշը 3000 լիտր/տարի է: Լիակթման վրա ազդող հիմնական գործակիցը կերակրումն է՝ օրական կերամիավորի նորման կազմում է 9-10 կերամիավոր: Ձմեռվա ամիսներին կովին տրվող կերը մոտ 6 կերամիավոր է պարունակում (3-4 կերամիավորով պակաս նորմայից) ինչը և բերում է կաթնատվության անկմանը: Ստորև ներկայացված է կերամիավորների պարունակությունը՝ ըստ հաճախ օգտագործվող կերատեսակների.

Տեսակ	1 կգ-ի հաշվարկով կերամիավորը
Խոտ առվույտի	0,52
Ծղոտ գարու	0,36
Քուսպ արևածաղկի	1,1
Եգիպտացորեն	1,1
Թեփ ցորենի	0,7
Թեփ գարու	0,7
Կարտոֆիլ	0,3

Մեկ կովի հաշվով 10 կերամիավորը ապահովելու համար ֆերմերը պետք է կատարի օրական 450 դրամի ծախս (եթե ֆերմերը ինքն է զբաղվում հողագործությամբ) կամ 850 դրամի ծախս, եթե գնում է կեր:

Ստորև ներկայացված է շահույթի հաշվարկը 10 կովի համար լիակթման պայմաններում:

¹ Ֆերմերի անմիջական մասնակցությունը խոտհարքի գործընթացին, եթե առկա է սեփական գյուղ. մեքենա, կթին և այլ գործողություններին մոտ 40%-ով նվազեցնում է ծախսը:

			Խոտի հավաքման և այլ գործողությունների պատվիրում	Խոտի հավաքման և այլ գործողությունների մեջ ֆերմերի ուղղակի ներգրավվում
Ֆերմերը գնում է կեր	1	Ստացվող կաթ	3000 լիտր x 10 = 30 000 լիտր	3000 լիտր x 10 = 30 000 լիտր
	1.1	Կաթի վաճառքից եկամուտ	30 000 x 130 = 3 900 000 դրամ	30 000 x 130 = 3 900 000 դրամ
	2	Հորթ	8 հատ	8 հատ
	2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
	3	Ընդամենը եկամուտ (1 + 2)	= 4 220 000 դրամ	= 4 220 000 դրամ
	4	Ծախսեր	= 1 210 000 դրամ	= 726 000 դրամ
	5	Լրացուցիչ ծախսեր այլ կերերի համար	= 1 530 000 դրամ	= 1 530 000 դրամ
6	Շահույթ	= 1 480 000 դրամ	= 1 964 000 դրամ	
			Խոտի հավաքման և այլ գործողությունների պատվիրում	Խոտի հավաքման և այլ գործողությունների մեջ ֆերմերի ուղղակի ներգրավվում
Ֆերմերը արտադրում է կեր	1	Ստացվող կաթ	3000 լիտր x 10 = 30 000 լիտր	3000 լիտր x 10 = 30 000 լիտր
	1.1	Կաթի վաճառքից եկամուտ	30 000 x 130 = 3 900 000 դրամ	30 000 x 130 = 3 900 000 դրամ
	2	Հորթ	8 հատ	8 հատ
	2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
	3	Ընդամենը եկամուտ (1 + 2)	= 4 220 000 դրամ	= 4 220 000 դրամ
	4	Ծախսեր	= 1 210 000 դրամ	= 726 000 դրամ
	5	Լրացուցիչ ծախսեր այլ կերերի համար	= 810 000 դրամ	= 810 000 դրամ
6	Շահույթ	= 2 200 000 դրամ	= 2 684 000 դրամ	

Վերը նշված վերլուծությունը հաստատում է այն փաստը, որ լիակրթման հնարավորության օգտագործման դեպքում հնարավոր է հասնել արդյունավետության և շահութաբերության գրեթե կրկնակի աճի.

Ներկա պայմաններ		Շահույթ
1	• ֆերմերը պատվիրում է խոտհարքի և կթի ծառայություններ	= 1 190 000 դրամ
2	• ֆերմերը ուղղակի ներգրավված է խոտհարքի և կթի գործողություններում (ունի համապատասխան գյուղտեխնիկա և սարքավորումներ)	= 1 674 000 դրամ
Հնարավորություններ		
3	• ֆերմերը պատվիրում է խոտհարքի և կթի ծառայություններ • գնում է լրացուցիչ կեր և ապահովում կովի համար անհրաժեշտ	= 1 480 000 դրամ

	կերամիավորի քանակը	
4	<ul style="list-style-type: none"> • Ֆերմերն ուղղակի ներգրավված է խոտհարքի և կթի գործողություններում (ունի համապատասխան գյուղտեխնիկա և սարքավորումներ) • գնում է լրացուցիչ կեր և ապահովում կովի համար անհրաժեշտ կերամիավորի քանակը 	= 1 964 000 դրամ
5	<ul style="list-style-type: none"> • Ֆերմերը պատվիրում է խոտհարքի և կթի ծառայություններ • արտադրում է լրացուցիչ կեր և ապահովում կովի համար անհրաժեշտ կերամիավորի քանակը 	= 2 200 000 դրամ
6	<ul style="list-style-type: none"> • Ֆերմերն ուղղակի ներգրավված է խոտհարքի և կթի գործողություններում (ունի համապատասխան գյուղտեխնիկա և սարքավորումներ) • արտադրում է լրացուցիչ կեր և ապահովում կովի համար անհրաժեշտ կերամիավորի քանակը 	= 2 684 000 դրամ

Սեփական մինի- գյուղտեխնիկայի և կթի սարքավորման կիրառում

Ֆերմերի հիմնական ծախսը կապված է խոտի պահեստավորման հետ: Խոտքաղի ժամանակահատվածում սեփական մինի-գյուղտեխնիկայի կիրառումը թույլ է տալիս ծախսի գումարը նվազեցնել 10-30% -ով, ինչպես նաև խուսափել անհրաժեշտ ծառայություններ մատուցող անհատների փնտրտուքի հետ կապված խնդիրներից, քանի որ այդ ժամանակահատվածում բավականին աճում է խոտքաղի և տեղափոխման հետ կապված ծառայությունների պահանջարկը:

Մեծ արդյունավետություն ունի նաև որակյալ կթի ագրեգատի կիրառումը, որը թույլ է տալիս նվազեցնել կիթի հետ կապված ծախսերը և որակյալ կթվոր գտնելու բարդությունը:

Մեկ կովի համար կթվորին վճարվում է 3500 դրամ ամսական: 10 կովի դեպքում տարեկան ծախսվում է 3500 դրամ x 10 կով x 9 ամիս = 315 000 դրամ:

Մեկ որակյալ կթի սարքավորումը, որն առանց դժվարության կարող է սպասարկել 10 կով, արժե մոտ 450 000 դրամ: Ընդամենը մեկ ու կես տարում այն հետ է բերում վճարված գումարը:

Սույն թվականի հունիսի 7 -ից Ստեփանավանում գործում է Անասնապահության աջակցման կենտրոնը, որը հիմնադրվել է CARD հիմնադրամի կողմից: Ֆերմերները այստեղ կարող են ստանալ խորհրդատվություն, որակյալ ծառայություններ՝ այդ թվում արհեստական սերմնավորման, և ձեռք բերել գյուղատնտեսական մինի սարքավորումներ:

Կաթնատու տոհմային անասունների բուծում

Անասնապահության արդյունավետության բարձրացման եղանակներից է նաև արհեստական սերմնավորմամբ կաթնատու տոհմային սորտերի ստացումը:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի տեսակները հնարավոր է ստանալ արհեստական սերմնավորման եղանակով՝ առանց ծնելիության հետ կապված խնդիրների:

Այս երեք տեսակների կաթնատվությունը հետևյալն է՝

- Շվից, Հոլշտեյն - 12 000 լիտր (յուղի պարունակությունը 3.5)
- Ջերսի – 10 000 լիտր (յուղի պարունակությունը 6.0)

Ֆերմերների մոտ տարածված է այն կարծիքը, որ արհեստական սերմնավորման դեպքում կովկասյան գորշ տեսակը չի կարող ծնել հորթը:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի ցեղատեսակները բավարարում են **Մնելիության դյուրինության գործակցին**, ինչը ենթադրում է սորտափոխանակության ընթացքում ծնելիության հետ կապված խնդիրների բացակայություն:

4 սերնդափոխություն է անհրաժեշտ հիմնական տոհմին շատ մոտ տեսակ ստանալու համար, որոնց կաթնատվության աճը ներկայացված է ստորև:

Սերունդ	Անվանում	Մակսիմալ կաթնատվություն	Թույլատրվում է հեռագնա արտավայր տանել
Առաջին	F1	4000	Այո
Երկրորդ	F2	6000	Այո
Երրորդ	F3	8000	Ոչ
Չորրորդ	F4	10000 - 12000	Ոչ

Անասնապահության օժանդակ հողագործություն

Ստեփանավանում վարելահողերը գրեթե չեն մշակվում, ինչը պայմանավորված է գյուղ-տեխնիկայի անբավարար քանակությամբ, ջրվող տարածքների բացակայությամբ և հաճախակի տեղացող կարկուտով, ինչը հազվադեպ է անվնաս թողնում բերքը:

**Վերլուծության
ընթացքում
Ստեփանավանում
տեղացած կարկուտը
գրեթե 70% -ով
ոչնչացրեց սպասվող
բերքը**

Հիմնականում տնամերձերում ցանվում են կարտոֆիլ և բանջարեղեններ սեփական կարիքների համար, իսկ տնամերձերից դուրս՝ հացահատիկ, առվույտ և կարտոֆիլ անասունների կերակրման համար:

Հակակարկուտակայանների առկայության դեպքում անասնապահները պատրաստ են մշակել հողատարածքները և ստանալ լրացուցիչ կերեր անասուններին կերակրելու համար:



Անասնապահության համեմատությունը ՀՀ առաջատար տարածաշրջանների հետ

Ստեփանավանի շրջանում խոշոր եղջերավոր անասնապահությունը ավանդապես զարգացած է եղել՝ շնորհիվ բարենպաստ կլիմայի, խոտհարքերի և արոտավայրերի բավարար քանակության: Ունենալով բնակլիմայական բարենպաստ պայմաններ՝ Ստեփանավանը զիջում է միջին կաթնատվությամբ Գեղարքունիքի և Շիրակի մարզերին, որտեղ կաթնատվության միջին ցուցանիշը 2600 լիտր է:

Մնացած բոլոր ցուցանիշներով (կատարվող ծախս, տնային տնտեսություններին պատկանող անասնագլխաքանակ և այլն) Ստեփանավանը անասնապահական զարգացած ոլորտների հետ գտնվում է նույն հարթության վրա:

Կանանց ներգրավվածությունը անասնապահության մեջ

Ստեփանավան համայնքում առկա արտագնա աշխատանքի մեծ մակարդակը (3000 – 3500 տղամարդ) իր թե՛ դրական, և թե՛ բացասական ազդեցությունն ունի տնտեսության մեջ կանանց ներգրավվածության տեսանկյունից:

Մեծաքանակ տղամարդկանց բացակայությունը համայնքից լրացուցիչ ազդակ է կանանց տնտեսության մեջ ակտիվ գործունեություն իրականացնելու համար, մինևույն ժամանակ դրսից պարբերաբար ստացվող տրանսֆերտները ապահովում են ստաբիլ եկամուտ ընտանիքի համար, ինչը պակասեցնում է գործարարությամբ զբաղվելու և աշխատանքի մոտիվացիան կանանց մոտ:

Անասնապահության մեջ կանայք հիմնականում ներառված են կիթի գործընթացում և տնային պայմաններում կաթնամթերքի արտադրության մեջ: Այս ոլորտում ներգրավված են մոտ 500 կին:

Այս ոլորտում նկատվում է կիթի գործընթացի ավտոմատացման տենդենց, ինչի հետևանքով պակասում է կանանց ներգրավվածությունը գործընթացին:

Համայնքում արտադրվող կաթի գրեթե 10 % -ը վերածվում է կաթնամթերքի, ինչը հիմնականում կանայք են անում:

Նախաձեռնություններ անասնապահության ոլորտում

Մատակարարում

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	բարելավման նախաձեռնություններ
Խոտհարքի և տեղափոխման հետ կապված ծառայություններ: արհեստական սերմնավորում, բուժօգնություն, դեղամիջոցներ: Լրացուցիչ կերեր:	Որակյալ անասնաբույժի և անասնապահության աջակցման կառույցի առկայություն:	Օգտագործվում է հիմնականում հին գյուղ. տեխնիկա:	Լրացուցիչ կերերի արտադրության հնարավորություն Ստեփանավանում		Նոր գյուղտեխնիկայի ձեռք բերում: Կերերի տեղական արտադրության հիմնում:

Խոտի պահեստավորում

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	բարելավման նախաձեռնություններ
Մինչև 10 կով ունեցողներ	Համայնքում և հարակից համայնքներում առկա են մեծ քանակությամբ խոտհարքեր: Համայնքը ունի անհրաժեշտ քանակությամբ բեռնափոխադրողներ՝ 45 միավոր ԿԱՄԱԶ, ԿՌԱԶ, ԶԻԼ, ՄԱԶ : Համայնքում առկա են 24 տրակտոր և 5 կոմբայն:	Դժվարությամբ են ձեռք բերում պայմանավորվածություն մեխանիզատորների հետ		Բնակլիմայական պայմաններից կախվածություն	մինի գյուղտեխնիկայի ձեռքբերում:
10 կով և ավելի ունեցողներ	Ունեն սեփական գյուղտեխնիկաները:	Գյուղտեխնիկան հիմնականում է:			գյուղտեխնիկայի և պահեստամասերի ձեռքբերում:

Լրացուցիչ կերերի մշակում

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	բարելավման նախաձեռնություններ
Ֆերմերներ	Սեփական գյուղտեխնիկա	Չեն հետևում և ձեռնարկում բերքատվության աճի հետ կապված գործողություններ	Վարելահողերը հիմնականում չեն մշակվում և առկա են ազատ վարելահողեր	Բնակլիմայական պայմաններից կախվածություն, կարկտահարության հաճախակի դեպքեր	Հակակարկտակայանների տեղադրման աջակցություն: Գարնանը կարճաժամկետ վարկերի տրամադրում:

Արոտավայրերի օգտագործում, այդ թվում հեռագնա

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	բարելավման նախաձեռնություններ
Ֆերմերներ, հովիվներ	Կա հեռագնա արոտ տանելու փորձ, մարդիկ չեն խուսափում իրենց հոտերը հեռագնա արոտներ տեղափոխելուց	Զագոնային արածացում չի իրականացվում:	Հանդերում առկա է ջուր: Արոտավայրերը բավարար են անասնազխաքանակի կրկնակի աճեցման համար	Գայլերի առկայություն: Կայծակի դեպքեր, երբ մարդիկ են մահացել	Գայլերի դեմ պաշտպանողական միջոցառումների իրականացում: Արոտավայրերի պլանավորված և արդյունավետ օգտագործում:

Կաթի արտադրության արդյունավետության բարձրացում

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	բարելավման նախաձեռնություններ
Ֆերմերներ	Համայնքում առկա է բարձրորակ անասնաբույժ:	Անասնագուների պայմանների բարելավում, աշխատանքների ավտոմատացում, լիակյում, տոհմերի փոփոխություն	Մարդիկ պատրաստ են փոփոխությունների:	Կաթի գնի անկանխատեսելի տատանումներ	Կթի սարքավորումների գնում:

Անասնապահության ոլորտում աջակից կառույցներին ուղղված առաջարկություններ:

- Նոր գյուղտեխնիկանի և պահեստամասերի ձեռքբերման աջակցություն:
- Կթի սարքավորումների և յուղաչափերի ձեռքբերման աջակցություն:
- Հակակարկտակայանների տեղադրում:
- Գարնանը ֆերմերներին ընդունելի պայմաններով կարճաժամկետ վարկերի տրամադրում:
- Անասնակերի տեղական արտադրության հիմնման աջակցություն:

Տնտեսության այլ ոլորտներ և կանանց ներգրավվածությունը

1. ՏԻՄ

Քաղաքապետարանում և քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող 9 ձեռնարկություններում (Երաժշտական դպրոց, Արվեստի դպրոց , 4 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, մշակույթի պալատ, գրադարան և մարզադպրոց) աշխատում են 197 մարդ, որոնց մեջ կանայք կազմում են 52 %:

2. Բանկային համակարգ

Ստեփանավանում գործում են Արդշինինվեստբանկ, ՎՏԲ բանկ, ԱԳԲԱ Ագրիկոլ բանկ, Հայգյուղփոխբանկ, Ֆինկա, ՍԵՖ ինտերնեշնլ, Արեգակ, ԷԿԼՕՖ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները: Այս համակարգում աշխատողների մեջ կանայք 36 % են կազմում:

3. Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը` 156 է, այդ թվում`

առևտրի փոքր , միջին և խոշոր օբյեկտներ-130 / 40-ը պատկանում է կանանց,

բենզինի լցակայաններ-6,

գազի լիցքավորման կետեր-2,

կենցաղային ծառայություններ-18 / 7 –ը պատկանում է կանանց:

Այս ոլորտում կանայք աշխատում են որպես վաճառողուհիներ, վարսահարդարներ, հավաքարարներ:

4. Կրթություն

Ստեփանավանում գործում է 7 հանրակրթական դպրոց, Ալեքսանդր Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի Ստեփանավանի մասնաճյուղը: Այս ոլորտում աշխատում են 187 կին:



Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Ստեփանավանի քաղաքապետարանի անձնակազմին` ի դեմս քաղաքապետ պարոն Միքայել Ղարաքեշիշյանի` ծրագրի հյուրընկալման և զարգացման նախաձեռնությունների աջակցության համար:

Տեղական թիվ

№	Անուն/ Ազգանուն	Պաշտոն	Հեռախոսահամար
1	Անդրանիկ Ջաղինյան	Քարդ ներկայացուցիչ	094 85 22 10
2	Արմեն Հարությունյան	Գործարար	093 37 57 37
3	Արմեն Ջաղինյան	Անասնաբուժ	094 87 22 10
4	Գվանդիր Աղաբալյան	մշակույթի տան նախկին տնօրեն	093 02 25 57
5	Լուիզա Հովհաննիսյան	Գործարար	094 61 62 32
6	Կարեն Պողոսյան	Տիմ ներկայացուցիչ	091 35 54 59
7	Համլետ Սահակյան	Գործարար	091 20 16 24
8	Մարգարիտա Թովմասյան	ՓՄՁ ԶԱԿ ներկայացուցիչ	098 22 30 05
9	Նարեկ Այվազյան	Հաշվապահական կենտրոն	077 64 24 57
10	Մարգիս Մովսիսյան	Գործարար	77 019 174
11	Սիմա Պետրոսյան	Գործարար	093 82 92 24
12	Սուսանա Ղազարյան	Գործարար, ՀԿ ներկայացուցիչ	094 23 87 58